

**Դու՛ն գիտես իմ նստիլս ու ելլելս:
Իմ խորհուրդս հեռուէն
կ'իմանաս
(Սաղմոս 139.2):**

Արդեօք ի՞նչու մարդիկ կը խորհին, թէ կրնան ընել շատ մը բաներ, որ ուրիշներ չեն կրնար: Միթէ անոնք կը մոռնա՞ն, թէ կայ Մէկը, որ կը լսէ ու կը տեսնէ ամէն բան: Եթէ մարդիկ չեն ուզեր, որ ուրիշներ գիտնան իրենց ըրած կարգ մը բաները, ի՞նչպէս կրնան անտեսել այն իրողութիւնը, թէ Աստուած կը տեսնէ ու կը լսէ ամէն բան:

Սաղմոս 130. 1-4-ին մէջ Դաւիթ այսպէս կը գրէ. «Ո՛վ Տէր, գիս քննեցիր ու քննեցար: Դու՛ն գիտես իմ նստիլս ու ելլելս, իմ խորհուրդս հեռուէն կ'իմանաս: Իմ շաւիղս ու պառկիլս կը քննես եւ իմ բոլոր բամբաններս գիտես: Վասն զի բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ: Ահա դու՛ն ո՛վ Տէր ամէնը գիտես:

Հայր մը իր գաւկիսն ընկերակցութեամբ կը բամբոռդէր, երբ բամբէն բաւական ներս արտի մը մէջ տեսաւ ձմերուկներու կոյտ մը: Հայրը ըսաւ տղուն. «Նայէ չորս կողմ միմչեւ երթամ ձմերուկ մը բերեմ»: Ան գնաց, ընտրեց ձմերուկ մը, եւ ինքնաշարժ վերադառնալէ առաջ հարցուց տղուն. «Ոնեւ մէկը կը գտնուի՞ մօտերը: Դիտէ չորս կողմը»: Տղան այսպէս պատասխանեց հօրը. «Հայրիկ, չե՞ս խորհիր, թէ պէտք է վեր նայինք»:

Այո՛, շատ կարեւոր է վեր նայիլ: Արդեօք ի՞նչ է քու վարուելակերպդ երբ ոնեւ մէկը չի տեսներ քեզ: Մի՛ մոռնար, որ Աստուած կը տեսնէ: Քննէ՛ քու անձը:

**ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ**

Կազմակերպութեամբ Կրօնական Ժողովին եւ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին, Երեքշաբթի, 30 Ապրիլ 2019-էն սկսեալ եւ ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց Եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Սուրբ պատարագի ընթացքին, հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Այս սուրբ պատարագին նպատակն է առիթ տալ մեր այն հայորդիներուն, որոնք Կիրակիի կողքին, շաբթուան ընթացքին եւս կը փափաքին Հայ Եկեղեցոյ հոգեւոր սնունդը ստանալ: Կը հրաւիրենք մեր ժողովուրդի գաւակները իրենց ամենօրեայ հեւքին մէջ պահ մը կանգ առնելու եւ աղօթքով Աստուծոյ ու իրարու հետ ըլլալու:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-ի էջ jerak Ծրագ Թերթ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 11 ՕԳՈՍՏՈՍ 2019** ԹԻԻ 32

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 5.1-10: Ա. Կր. 6.15-7.11
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍ 19.3-12

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ ՊԱՀՈՅ
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏԹԵՍԻ
19.3-12

Փարիսեցիներ Յիսուսը փորձելու մտադրութեամբ մօտեցան անոր եւ հարցուցին. «Իրաւունք ունի՞ մէկը ոնեւ պատճառով իր կիներ արձակելու»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքերուն մէջ, թէ Աստուած սկիզբէն արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ անոնց. "Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան": Հետեւարար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուրեմն ոնեւ մէկը թող չբաժնէ անոնք, որ Աստուած միացուց»:

Փարիսեցիները դարձեալ հարցուցին. «Հապա ինչո՞ւ Մովսէս օրէնք սահմանեց՝ բաժանման թողթ տալ կնոջ եւ արձակել զայն»: Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեր խստասրտութեան պատճառով արտօնեց արձակել ձեր կիները, սակայն ստեղծագործութեան ժամանակ արձակելու խօսք չկար: Գիտցէք նաեւ, թէ ով որ իր կիներ կ'արձակէ առանց պոռնկութեան պատճառի եւ ուրիշ մը կ'առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ. եւ ով որ արձակուած կիներ կ'առնէ՝ ան ալ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

Աշակերտները ըսին Յիսուսի. «Եթէ ամուսնութիւնը այդպէս դատապարտութեան պատճառ կրնայ ըլլալ այր մարդուն եւ կնոջ համար, աւելի լաւ է չամուսնանալ»:

Յիսուս ըսաւ. «Բայց ամէն մարդ չի կրնար առանց ամուսնութեան մնալ, այլ՝ միայն անոնք, որոնց Աստուած կարողութիւն տուած է: Որովհետեւ մարդիկ չեն ամուսնանար այն պարագաներուն, երբ ծնունդով ներքինի են, կամ մարդոց կողմէ ներքինի եղած են եւ կամ իրենք զիրենք ներքինի դարձուցած են Աստուծոյ արքայութեան համար: Ով որ կրնայ ընդունիլ իմ հաստատումս, թող կատարէ զայն»:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳԻՐՔԵՆ
5.1-10

Լսեցէք սիրոյ երգը, որ ձեզի պիտի երգեմ ի դիմաց սիրականի, որ կ'երգէ իր սիրելի այգիին:

«Նս, սիրականս, այգի մը առի բարեբեր բլուրի մը վրայ: Ցանկով պատեցի, ձողերով պատ քաջեցի անոր շուրջը եւ ընտիր խաղողի որթատունկ տնկեցի: Այգիին կեդրոնը աշտարակ մը կանգնեցի եւ հնձան մըն ալ փորեցի եւ ապա սպասեցի, որ ընտիր խաղող տայ, բայց միայն ազոխ տուաւ:

Արդ, ո՛վ բնակիչներ Յուդայի ու Երուսաղէմի, դուք դատեցէք իմ եւ այգիիս խնդիրը: Ուրիշ ի՞նչ պէտք էր ընէի այգիիս համար եւ չըրի, եւ ահա խաղողի փոխարէն ազոխ տուաւ ինձի:

Հիմա ես ձեզի ըսեմ թէ ինչ պիտի ընեմ այգիիս. «Պիտի քակեմ ցանկապատը, որպէսզի գազաններուն հարակ դառնայ, պիտի փլցնեմ պատերը, որպէսզի ոտքի կոխան ըլլայ: Խոպան պիտի ձգեմ. ո՛չ պիտի յօտեմ եւ ոչ ալ բռնեմ. պիտի թողում որ փուշ ու տատասկ բուսցնէ, եւ ամպերուս պատուէր պիտի տամ, որ չանձրեւեն այգիիս վրայ»:

Երկնաւոր Զօրքերու Տիրոջ այգիին Խորայելի տունն է, իսկ անոր սիրած նոր որթատունկը՝ Յուդայի բնակիչները: Անոնցմէ իրաւունք ակնկալեց, բայց անիրաւութիւն գտաւ. արդարութիւն կամեցաւ, բայց աղաղակող անարդարութիւն տեսաւ: Վա՛յ անոնց որոնք իրարու ետեւէ տուն կը գնեն, նոր կալուածներ կը բարդեն իրենց ունեցածներուն վրայ, ընկերոջ բան չձգելու համար: Միթէ առանձի՞ն պիտի ապրիք աշխարհի վրայ:

Այս բոլորէն տեղեակ է Երկնաւոր Զօրքերու Տէրը, որ այսպէս կ'ըսէ ձեզի. «Բողոք այս մեծ ու գեղեցիկ տունները աւեր եւ անմարդաբնակ պիտի մնան, եւ ձեր հողերը արդիւնք պիտի չտան: Տասը արտավար այգիէն հազիւ կարաս մը գինի պիտի ստանաք, տասը պարկ սերմանողը հազիւ մէկ պարկ պիտի ժողվէ»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ
ՆԱՄԱԿԸ
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
6.15--7.11

Զե՛ք գիտեք, թէ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Քրիստոսի անդամները առնենք պոռնիկի անդամ դարձնենք: Բնաւ երբեք: Զե՛ք որ գիտէք, թէ պոռնիկին միացողը անոր հետ մէկ մարմին կը կազմէ, որովհետեւ գրուած է. «Երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»: Նոյնպէս ալ, ով որ Տիրոջ միանայ՝ անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ: Հետեւաբար պոռնկութենէ հեռու փախէք: Բոլոր միւս մեղքերը որ մարդ կը գործէ, իր մարմինին հետ կապ չունին, բայց պոռնկութիւն ընողը իր մարմինին դէմ կը մեղանչէ: Զե՛ք գիտեք, որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգիին, որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի: Գիտցէք, որ դուք չէք ձեր անձերուն տէրը, այլ՝ Աստուծո, որ փրկագինով ձեզ գնեց: Հետեւաբար այնպէս ապրեցէք, որ Աստուծո փառաւորուի ձեր մարմիններով:

Ձեր նամակին մէջ ինձի գրած էիք նաեւ այն մասին, թէ մարդ լաւ կ'ընէ եթէ բնաւ չամուսնանայ: Բայց որպէսզի պոռնկութեան մէջ չիյնաք՝ ամէն մարդ իր կինը թող ունենայ եւ ամէն կին՝ իր ամուսինը, որպէսզի կնոջ պէտքերը այրը գոհացնէ եւ ամուսնոյն պէտքերը՝ կինը: Որովհետեւ կինը իր մարմինին տէրը չէ, այլ՝ ամուսինը. ո՛չ ալ այրը իր մարմինին տէրն է, այլ՝ կինը: Երկար ատեն հեռու մի մնաք իրարմէ: Եթէ կ'ուզէք աղօթքի նուիրուիլ, կրնաք փոխադարձ համաձայնութեամբ ժամանակ մը իրարմէ հեռու մնալ, բայց յետոյ վերադարձէք ձեր կենակցութեան, որպէսզի չըլլայ որ Սատանան ձեզ փորձութեան մղէ՝ ձեր անժուժկալութենէն օգտուելով:

Հրահանգ մը չէ այս տուածս, այլ պարգապէս՝ ներողամիտ կեցուածք: Որովհետեւ ես պիտի ուզէի, որ ամէն մարդ ալ ինձի պէս ապրէր, բայց Աստուծո իւրաքանչիւրին իրեն յատուկ շնորհք մը տուած է: Մէկուն՝ այսպէս ապրելու շնորհք, միւսին՝ այնպէս: Սակայն ամուսիններուն եւ այրիներուն կ'ըսեմ. « Աւելի լաւ կ'ընեն՝ եթէ ինձի պէս մնան»:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՓԵՍՈՍԻ Ա. ԺՈՂՈՎՈՅՆ 200 Ա.
ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ

Եփեսոսի Տիեզերական Ժողովը իր տօնակատարութիւնը ունի Հայց. եկեղեցւոյ մէջ՝ Վերափոխման տօնի Բարեկենդանի Շաբաթ օրը:

Եփեսոսի տիեզերական Ժողովը գումարուեցաւ 431 թուականին, մասնակցութեամբ՝ 200 հայրապետներու, քննելու համար Նեստորի աղանդաւորական մոլոր վարդապետութիւնը:

Նեստոր կ'ըսէր, որ Յիսուս մարդ ծնաւ մեզի նման, ապա աստուածային բնութիւն ստացաւ: Նեստոր կ'ուսուցանէր նաեւ, որ Ս. Կոյս Մարիամ Աստուածածին չէ, այլ՝ մարդածին: Նեստորի այս մոլոր վարդապետութիւնը մեծ խռովութիւն յառաջացուց:

Նեստորի դատապարտելի ընթացքը քննելու համար, Փոքր Թեոդորոս կայսեր հրամանով, Եփեսոս քաղաքին մէջ, 200 հայրապետներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Տիեզերական Ժողով: Ժողովի ընթացքին դատապարտուեցան Նեստորն ու իր համախոհները եւ հաստատուեցաւ Կիրեղ Աղեքսանդրացիի բանաձեւը՝ Քրիստոսի բնութեան վերաբերեալ «Մի բնութիւն Բանին մարմնացելոյ» նախադասութեան մէջ խտացնելով: Ըստ այս բանաձեւին՝ Յիսուս ծնաւ որպէս Աստուած եւ իր աստուածային ու մարդկային բնութիւնները անշփոթ կերպով իրար միացան եւ կազմեցին մէկ բնութիւն:

Իսկ Ս. Կոյսը դաւանեցին Աստուածածին:

Հայ եկեղեցին եւս ընդունեց Եփեսոսի ժողովի կանոններն ու որոշումները եւ եկեղեցական օրացոյցին մէջ յատուկ օր ալ նշանակեց տօնելու եւ յաւերժացնելու համար այդ ժողովի յիշատակը:

Այստեղ անհրաժեշտ կը համարենք յիշատակել, որ Հայ եկեղեցին կ'ընդունի միայն երեք տիեզերական Ժողովներ՝ Նիկիոյ, Եփեսոսի եւ Կ. Պոլսոյ, եւ կը դաւանէ միայն անոնց որոշումներն ու բանաձեւումները:

ԻՆՉ

ՀԱՆԴԻՍԱԿՈՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ
ԿԱՐԴԱՅՈՒԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

Աւետարանի ընթերցումը միւս բոլոր ընթերցումներէն շատ աւելի մեծ բացառութիւն ունի: Զայն կը կարդան առանձին հանդիսաւորութեամբ: Սարկաւազը կը ձայնէ Օրթի (ոտքի)՝ քահանան՝ խաղաղութիւն ամենեցուն (խաղաղութի՛ւն ամէնուդ). դպիրները՝ եւ ընդ հոգւոյդ քու (նաեւ՝ քու հոգիիդ). սարկաւազը՝ երկիւղածութեամբ լուարուք (երկիւղածութեամբ մտիկ ըրէ՛ք). Աւետարանը կարդացողը՝ Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի (Յիսուս Քրիստոսի Աւետարանը՝ Մատթէոսի համաձայն). դպիրները՝ Փառք քեզ Տէր Աստուած մեր (Փա՛ռք քեզի, Տէր Աստուած մեր). սարկաւազը՝ պոռնիւմէ (մտիկ ընենք). Ժողովուրդը՝ ասէ Աստուած (Աստուած է որ կը խօսի):